

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության  
Ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համակարգին ուղղված ծախսերի հիմնական նպատակը համակարգի ծառայողների կողմից հանրության համար առավել մատչելի, որակյալ և անաչառ ծառայությունների մատուցման համար նախադրյալների ստեղծումն է: Դրանց շարքին կարելի է դասել համակարգի ծառայողների ֆինանսական և իրավական պաշտպանվածությունն ապահովող երաշխիքների արմատավորումը:

ՀՀ արդարադատության նախարարության հիմնական խնդիրներն են.

ա/ օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության օրենսդրության ստեղծմանն օժանդակելը, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համակարգումը.

բ/ քաղաքացիական կացության ակտերի գրանցման նկատմամբ մեթոդական ղեկավարման և վերահսկողության իրականացումը.

գ/ նոտարական գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացումը.

դ/ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծվող իրավաբանական անձանց՝ բացառությամբ բանկերի և վարկային կազմակերպությունների, և անհատ ձեռնարկատերերի պետական գրանցման, ինչպես նաև իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների հաշվառման ու լրատվության միջոցների հաշվառման գործառույթների ապահովումը.

ե/ հասարակական միավորումների և օրենքով նախատեսված այլ կազմակերպությունների, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների նկատմամբ վերահսկողության իրականացման ապահովումը՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով.

զ/ Հայաստանի Հանրապետության միջազգային կապերի իրավական ապահովման և միջպետական հարաբերություններում Հայաստանի Հանրապետության շահերի իրավական պաշտպանության աշխատանքերին մասնակցության ապահովումը,

ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության շահերը մարդու իրավունքների եվրոպական դատարանում ներկայացնելը.

ե/ անվճարունակության գործերով կառավարիչների լիցենզավորման և լիցենզիայի պահանջների իրականացման նկատմամբ վերահսկողության իրականացման ապահովումը,

ը/ նախարարության համակարգում դատական փորձաքննությունների կատարման ապահովումը.

թ/ Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասությունների կատարման ապահովումը.

ժ/ Հայաստանի Հանրապետությունում դատական ակտերի հարկադիր կատարման ապահովումը.

ի/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ խնդիրների իրականացման ապահովումը:

Վերոհիշյալ խնդրիներից յուրաքա ամրագրված ընդհանուր տնտեսական և սոցիալական խնդիրների և նպատակների իրագործման վրա:

Վերոհիշյալ խնդրիների իրագործման նպատակով 2010 թվականին ՀՀ արդարադատության նախարարությունը պետական բյուջեից ֆինանսավորվել է հետևյալ ծրագրերի գծով.

- Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում /նախարարների աշխատակազմերի պահպանում/
- Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում /նախարարությունների աշխատակազմերի պահպանում/
- ՔԿԱԳ ծառայության գործունեության կազմակերպման բնագավառում ժպետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորում
- Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության պահպանում

- Փորձաքննությունների ծառայություններ
- Թարգմանչական ծառայություններ
- Հանրային պաշտպանի գրասենյակի պահպանում
- Հրատարակչական, տեղեկատվական և տպագրական ծառայություններ
- Քրեկատարողական համակարգի պահպանում
- Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Դատաիրավական բարեփոխումների երկրորդ ծրագիր
- Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Դատաիրավական բարեփոխումների երկրորդ ծրագրում ճապոնական դրամաշնորհային ծրագիր
- Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Դատաիրավական բարեփոխումների երկրորդ ծրագրում հոլանդական դրամաշնորհային ծրագիր
- ՀՀ արդարադատության նախարարության հատուկ ծառայողների վերապատրաստում և հատուկ ուսուցում:

Այժմ անդրադառնանք նշված ծրագրերից յուրաքանչյուրին առանձին-առանձին.

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում

Նախարարների աշխատակազմերի մասով ՀՀ 2010 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 47995.1հազ. դրամ: Ֆինանսավորումը կազմել է 47938.4հազ. դրամ, դրամակղային ծախսը՝ 47934.26հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 50542.96հազ. դրամ: Կրեդիտորական պարտք՝ առաջացել է «պարտադիր սոցիալական ապահովության վճարներ» հոդվածով՝ 128.0 հազ. դրամ, այն պատճառով, որ նախարարի տեղակալի երկու թափուր հաստիքների համար նախատեսված միջոցները օգտագործվել են սպասարկող անձնակազմի խրախուսման նպատակով, որոնց աշխատավարձը չի գերազանցում 100.0 հազ. դրամ գումարը և սոցապ վճարները 5 տոկոսի փոխարեն հաշվարկվել են 15 տոկոսի չափով: 01.01.2011թ. կրեդիտորական պարտք և գերածախս՝ 126.0հազ. դրամ, է առաջացել «ապահովագրական ծախսեր» 4215 հոդվածով: Պարտքն առաջացել է այն պատճառով, որ կառավարության որոշման համապատասխան բոլոր ավտոմեքենաները պարտադիր

պետք է ապահովագրվեին մինչև 31.12.2010թ., իսկ բյուջետային միջոցներ 2010 թվականին այս հոդվածով նախատեսված չէր: Պարտքի մարումը արդեն իսկ կատարվել է:

Նախարարների աշխատակազմերի մասով ՀՀ 2009 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 54218.9հազ. դրամ: ՀՀ կառավարության 26.03.2009 թվականի թիվ 302-Ն որոշման համաձայն 6577.3հազ. դրամ 2009 թվականին կասեցվել է, ֆինանսավորումը կազմել է 47584.7հազ. դրամ, դրամակղային ծախսը՝ 47584.4հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 46924.5 հազ. դրամ:

Նախարարությունների աշխատակազմերի մասով ՀՀ 2010 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 489737.9հազ. դրամ: Ֆինանսավորումը կազմել է 489465.42հազ. դրամ, դրամակղային ծախսը՝ 489434.57հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 491526.87 հազ. դրամ: «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» /նախարարությունների աշխատակազմերի մասով /01010105 ծրագրի գծով 01.01.2011թ դեբիտորական պարտքը «պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ» /4131/ հոդվածով կազմել է 36.7 հազ. դրամ, քանի որ սոցապ վճարները կատարելու հետո, աշխատակիցներից մեկին վճարվել է անաշխատունակության նպաստ: Այս հոդվածի գծով հիմնարկի դեբիտորական և կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների և հիմնարկի կատարված բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին հաշվետվության մեջ 3304.4 հազ. դրամի տարբերությունը բացատրվում է նրանով, որ ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմում իրականացված ստուգման արդյունքում ՀՀ ֆինանսների նախարարության 22.10.2010թ.148-Ա ստուգման ակտի համաձայն 3304.4 հազ. դրամ հետ է փոխանցվել պետական բյուջե՝ 900005280640 հաշվին: 01.01.2011թ. «էներգետիկ ծառայություններ» /4212/ հոդվածով կրեդիտորական պարտքը՝ 309.4հազ. դրամ, և գերածախսը 181.2հազ.դրամ, որը պայմանավորված է դեկտեմբեր ամսին կատարված ծախսով, որի վերաբերյալ փաստաթղթերը ներկայացվում են հունվարին: 01.01.2011թ. կապի ծառայությունների /4214/ գծով դեբիտորական պարտքը կազմել է 170.4հազ. դրամ և կրեդիտորական պարտքը՝ 263.9հազ. դրամ, որը պայմանավորված է այն հանգամանքով, դեկտեմբեր ամսվա ծախսի վերաբերյալ

փաստաթղթերը նախարարություն են ներկայացվում հունվարի 15-ից հետո: 01.01.2011թ. կրեդիտորական պարտք և գերաձախս՝ 183.0հազ. դրամ, է առաջացել «ապահովագրական ծախսեր» 4215 հոդվածով: Պարտքն առաջացել է այն պատճառով, որ կառավարության որոշման համապատասխան բոլոր ավտոմեքենաները պարտադիր պետք է ապահովագրվեին մինչև 31.12.2010թ., իսկ բյուջետային միջոցներ 2010 թվականին այս հոդվածով նախատեսված չէր: Պարտքի մարումը արդեն իսկ կատարվել է:

Տարվա ընթացքում կատարվել են հոդվածային տեղաշարժեր. պակասեցվել է «կապի ծառայություններ» հոդվածը՝ 1889.4 հազ. դրամով, «ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» հոդվածը՝ 1790.0 հազ. դրամով, ավելացվել է «էներգետիկ ծառայություններ» հոդվածը՝ 1150.0 հազ. դրամով, «ներքին գործուղումներ» հոդվածը՝ 827.0 հազ. դրամով, «տրանսպորտային նյութեր» հոդվածը՝ 1702.4 հազ. դրամով:

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեով այս ծրագրի գծով նախատեսվել է 499101.0հազ. դրամ: ՀՀ կառավարության 26.03.2009 թվականի թիվ 302-Ն որոշման համաձայն 10207.5հազ. դրամ գումար 2009 թվականին կասեցվել է, ֆինանսավորումը կազմել է 488765.68հազ. դրամ, դրամակղային ծախսը՝ 484388.09հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 481915.89 հազ. դրամ:

2010թվականի և 2009 թվականի նշված երկու ծրագրով նախատեսված գումարների տարբերությունը հիմնականում «աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ», «քաղաքացիական ծառայողների պարգևատրում» և «պարտադիր սոցիալական ապահովության վճարներ» հոդվածների գծով է՝ պայմանավորված աշխատողների աշխատավարձերի բնական աճով: 2009 թվականին հիմնական միջոցներ ձեռքբերելու նպատակով նախարարությանը գումարներ են հատկացվել «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացում» ծրագրի գծով, այդ թվում՝ նախարարների աշխատակազմերի մասով՝ 10780.6 հազ. դրամ և նախարարությունների աշխատակազմերի մասով՝ 52881.2 հազ. դրամ: Սակայն նշված գումարները նույնպես ՀՀ կառավարության 26.03.2009թվականի թիվ 302-Ն որոշմամբ կասեցվել են::

ՔԿԱԳ ծառայության գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների հազ. իրականացման ֆինանսավորում

«Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորում» ծրագրով «ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսվել է 148580.4 հազ. դրամ, ՀՀ կառավարության 23.12.2010թ. թիվ 1777-Ն որոշմամբ այն պակասեցվել է 1236.5 հազ. դրամով, ճշտված նախահաշիվը կազմել է 147343.7 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 147343.4 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 143841.57 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 143841.57 հազ. դրամ: Համայնքների կողմից չօգտագործված գումարները՝ 3501.83 հազ. դրամ վերադարձվել է պետական բյուջե:

«ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսվել է 147650.4 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 147649.59 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 147649.59 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 147649.59 հազ. դրամ: :

Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության պահպանում

ՀՀ 2010 թվականի պետական բյուջեով այս ծրագրի գծով նախատեսվել է 563285.6 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 563127.82 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 563127.82 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 593649.02 հազ. դրամ:

«ԴԱՀԿ ծառայության պահպանում» /03030102/ ծրագրի գծով 01.01.2011թ. «աշխատողների աշխատավարձեր և հավելումներ» /4111/ հոդվածի գծով դեբիտորական պարտքը կազմել է 258.3 հազ. դրամ, կրեդիտորական պարտք՝ 365.3 հազ. դրամ: Նշված

պարտքը բյուջետային պարտք չէ: «ԴԱՀԿ ծառայության պահպանում» /03030102/ ծրագրի գծով 01.01.2010թ. կրեդիտորական պարտք՝ 1134.2 հազ. դրամ և գերաձախս՝ 1706.7 հազ. դրամ է առաջացել «էներգետիկ ծառայություններ» հոդվածով, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ դեկտեմբեր ամսվա ծախսի վերաբերյալ փաստաթղթերը նախարարություն են ներկայացվում հունվարի 15-ից հետո: Նշված պարտքը նախատեսվում է 2011թ. փակել արտաբյուջետային միջոցների հաշվին: «Կոմունալ ծառայությունների» /4213/ գծով 01.01.2011թ. կրեդիտորական պարտքը կազմել է 5708.3 հազ. դրամ և առաջացել է գերաձախս՝ 3021.8 հազ. դրամ, որը բյուջետային պարտք չէ և այն հետևանք է ԴԱՀԿ ծառայության և մարզային ստորաբաժանումների կողմից օգտագործված ջրի քանակի և այս հոդվածով նախատեսված գումարի անհամապատասխանության, որի մասին միջոց նշվել է բյուջետային հայտում և այս հարցը բարձրացվել է ՀՀ կառավարությունում: Իսկ կապի ծառայության /4214/ գծով 01.01.2011թ. դեբիտորական պարտքը կազմել է 4889.7 հազ. դրամ: Այս հոդվածով առաջացած կրեդիտորական պարտքը՝ 8807.3 հազ. դրամ և գերաձախսը՝ հետևանք է մեծաքանակ փոստային առաքումների: ՀՀ կառավարության 11.02.2010թ. թիվ 111-Ա որոշմամբ ՀՀ արդարադատության նախարարության ԴԱՀԿ ծառայության 2007-2009 թվականների ընթացքում փոստային ծառայությունների գծով առաջացած պարտքերի մարման նպատակով 2010 թվականին ՀՀ արդարադատության նախարարությանը կառավարության պահուստային ֆոնդից հատկացվել է 52800.0 հազ. դրամ՝ կապի ծառայություններ 4214 տնտեսագիտական դասակարգման հոդվածով: Դրանով է պայմանավորված ՀՀ արդարադատության նախարարության կողմից «ԴԱՀԿ ծառայության պահպանում» /03 03 01 02 / և «ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ» /11 01 01 01/ ծրագրերի գծով ներկայացված հաշվետվություններում առկա շեղումը: Այս ծրագրով «այլ նպաստներ բյուջեից» 4729 հոդվածի գծով հիմնարկի դեբիտորական և կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների և հիմնարկի կատարված բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին հաշվետվության մեջ 3953.3 հազ. դրամի տարբերությունը բացատրվում է նրանով, որ ՀՀ արդարադատության նախարարության ԴԱՀԿ ծառայությունում իրականացված ստուգման արդյունքում ՀՀ ֆինանսների նախարարության ստուգման ակտի համաձայն 3953.3 հազ. դրամ հետ է փոխանցվել պետական բյուջե՝ 900005280640 հաշվին:

2009 թվականի պետական բյուջեով այս ծրագրի գծով նախատեսվել է 569220.9 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 535994.2 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 535988.4 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 560015.4 հազ. դրամ:

2009 և 2010 թվականների գումարների տարբերությունը հիմնականում պայմանավորված է «աշխատավարձ և դարն հավասարեցված վճարումներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածով:

### Փորձաքննությունների ծառայությունների

Ծրագրի նպատակն է ապահովել փորձաքննությունների կատարման ծառայությունների ձեռքբերումը պետական կարիքների համար՝ քրեական հետապնդման մարմինների որոշումների հիման վրա:

«ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով «Փորձաքննությունների ծառայություններե ծրագրով նախատեսվել է 119374.3 հազ. դրամ, ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 119374.3 հազ. դրամ:

«ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով «Փորձաքննությունների ծառայություններե ծրագրով նախատեսվել է 119374.3 հազ. դրամ, ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 119374.3 հազ. դրամ:

### Հանրային պաշտպանի գրասենյակի պահպանում

ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում քաղաքացիներին անվճար իրավաբանական օգնություն ցույց տված փաստաբանների վարձատրության նպատակով 2010 թվականին նախատեսվել է 152433.0 հազ. դրամ, ֆինանսավորումը դրամարկղային և փաստացի ծախսերը կազմել են 152433.0 հազ. դրամ:



2009 թվականին նախատեսվել է 152433.0 հազ. դրամ, ֆինանսավորումը, դրամարկղային կազմել է 152432.3 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը կազմել է 150414.8 հազ. դրամ, տարբերությունը՝ 232.7 հազ. դրամը վերադարձվել է պետական բյուջե: Փաստացի ծախսը դրամարկղային ծախսի համեմատ պակաս է կատարվել 2017.5 հազ. դրամով: Նշված գումարից 2010.6 հազ. դրամը վերահսկիչ պալատի ստուգման արդյունքում վերականգնվել է պետական բյուջե, իսկ 7550 դրամ էլ 10.02.2009թ. ետ է փոխանցվել պետական բյուջե՝ որպես չօգտագործված գումար:

#### Հրատարակչական, տեղեկատվական և տպագրական ծառայություններ

2010 թվականին «Հրատարակչական, տեղեկատվական և տպագրական ծառայություններ» ծրագրով նախատեսվել է 227161.0 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել է 226458.88 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 226458.88 հազ. դրամ: ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից ՀՀ կառավարության 16.09.2010թ. թիվ 1207-Ն որոշմամբ հրատարակչական ծառայությունների ձեռքբերման նպատակով հատկացվել է լրացուցիչ 100712.1 հազ. դրամ:

2009 թվականին «Հրատարակչական, տեղեկատվական և տպագրական ծառայություններ» ծրագրով նախատեսվել է 227161.0 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել է 225102.73 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 218143.23 հազ. դրամ: ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հրատարակչական ծառայությունների ձեռքբերման նպատակով հատկացվել է լրացուցիչ 22088.4 հազ. դրամ:

Համաշխարհային Բանկի աջակցությամբ իրականացվող Դատաիրավական  
բարեփոխումների երկրորդ վարկային ծրագիր

«ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով «Համաշխարհային Բանկի աջակցությամբ իրականացվող Դատաիրավական բարեփոխումների երկրորդ վարկային ծրագրի» իրականացման համար նախատեսվել ընդհանուր 2,489,407.8 հազ. դրամ, որից 1,941,710.2 հազ. դրամը վարկային միջոցներից և 547,697.6 հազ. դրամը՝ համաֆինանսավորման միջոցներից: ՀՀ կառավարության 23.12.2010թ. թիվ 1777-Ն որոշմամբ համաֆինանսավորման համար նախատեսված գումարները պակասեցվել են 92273.9 հազ. դրամով, տարեկան ճշտված նախահաշիվը կազմել է 455423.7 հազ. դրամ: Դրամարկղային ծախսը երկրորդ վարկային ծրագրով կազմել է 2,031,216.9 հազ. դրամ, որից վարկային միջոցներից 1,575,794.0 հազ. դրամ, համաֆինանսավորման միջոցներից՝ 455,422.9 հազ. դրամ: Ընդհանուր փաստացի ծախսը ծրագրով կազմել է 2,018,500.0 հազ. դրամ, որը դրամային արտահայտությամբ կազմում է նախատեսված տարեկան բյուջեի 81%:

Նշված ծրագրով տարեկան ցուցանիշների թերակատարումը պայմանավորված է Վայոց Ձոր մարզի Եղեգնաձոր քաղաքի դատարանի նոր շենքի և ՀՀ դատական ակադեմիայի նոր շենքային համալիրի կառուցման մրցութային գործընթացների երկարաձգման հետևանքով (մանսավորապես՝ նախատեսվածից ուշ է հաստատվել ՀՀ կառավարության որոշումը և ՀՀ քաղաքապետարանի կողմից շինարարության թույլտվությունը): Արդյունքում 2010թ. երկրորդ եռամսյակում նախատեսված երկու ամենախոշոր շինարարական աշխատանքների ծրագրերը փաստացի մեկնարկվել են շուրջ 4-5 ամիս ուշացումով, ինչը փաստացի անհնարին է դարձրել 2010թ. բյուջեով նախատեսված ամբողջ միջոցների իրացումը 2010թ. բյուջետային տարվա ընթացում:

*Ընդհանուր առմամբ ծրագիրը բաղկացած է վեց հիմնական բաղադրիչներից*

*Բաղադրիչ 1. Դատական համակարգի կառավարման ու վարչարարության ուժեղացում*

*Բաղադրիչ 2. Դատարանների շենքերի վերականգնում*

*Բաղադրիչ 3. Դատավորների վերապատրաստման դպրոց*

*Բաղադրիչ 4. Դատական ակտերի հարկադիր կատարման բարելավում*

*Բաղադրիչ 5. Արբիտրաժի ծառայությունների ուժեղացում*

*Բաղադրիչ 6. Իրավական տեղեկատվության մատչելիության ընդարձակում և հանրային իրազեկության բարձրացում*

2010 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում հիմնականում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- 2010 թվականին ավարտվել և շահագործման են հանձնվել երեք ընդհանուր իրավասության դատարանների նորակառույց շենքեր՝ Սպիտակ, Չարենցավան և Գորիս քաղաքներում,
- 2010 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում մեկնարկվել են մի շարք դատարանների վերակառուցման և կառուցման աշխատանքներ, այդ թվում՝ Ապարան, Մեղրի և Եղեգնաձոր քաղաքներում տեղակայված դատարանների շենքերի համար,
- Շինարարական աշխատանքների հետ զուգահեռ բոլոր դատարանների համար 2010թ. ընթացքում գնվել են անհրաժեշտ կահավորանք և սարքավորումներ ծրագրի շահառուների կարիքների համար, այդ թվում՝ ՀՀ դատական դեպարտամենտի և ՀՀ դատարանների համար.

- ցանցային սերվերներ, համակարգիչ, տպիչ և պատճենահանող սարքեր,

դատական նիստերի ձայնագրման համակարգեր,

- շահագործման հանձնված շենքերի դատական դահլիճների,

գրասենյակների և աշխատասենյակների կահավորանք և

շերտավարագույրներ,

- շահագործման հանձնված դատարանների շենքերի անվտանգության

գոտիների բաժանման նպատակով դռների հսկման համակարգեր,

ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության համար.

- Ցանցային սերվերներ, համակարգիչներ, տպիչ և պատճենահանող սարքեր,

- մարզային ստորաբաժանումների աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով թվով 8 «Շերտվե-Նիվաե մակնիշի ավտոմեքենաներ:

- «ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով «Համաշխարհային Բանկի աջակցությամբ իրականացվող Դատաիրավական բարեփոխումների երկրորդ վարկային ծրագրի» իրականացման համար նախատեսվել է ընդհանուր 2,735,852.0 հազ. դրամ, որից 2,133,968.8 հազ. դրամը վարկային միջոցներից և 601,883.2 հազ. դրամը՝ համաֆինանսավորման միջոցներից:

Դրամարկղային ծախսը երկրորդ վարկային ծրագրով կազմել է 2,776,720.0 հազ. դրամ, որից վարկային միջոցներից 2,174,836.8 հազ. դրամ, համաֆինանսավորման միջոցներից՝ 601,883.2 հազ. դրամ:

Համաշխարհային Բանկի աջակցությամբ իրականացվող Դատախրավական բարեփոխումների երկրորդ ծրագրում ճապոնական դրամաշնորհային ծրագիր

«ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով «Համաշխարհային Բանկի աջակցությամբ իրականացվող Դատախրավական բարեփոխումների երկրորդ վարկային ծրագրում ճապոնական դրամաշնորհային ծրագրի» իրականացման համար նախատեսվել է ընդհանուր 196,006.5 հազ. դրամ, որից 152,869.6 հազ. դրամը դրամաշնորհի միջոցներից և 43,136.9 հազ. դրամը՝ համաֆինանսավորման միջոցներից: ՀՀ կառավարության 23.12.2010թ. թիվ 1777-Ն որոշմամբ համաֆինանսավորման միջոցները պակասեցվել են 3413.5 հազ. դրամ: Տարեկան ճշտված նախահաշիվը կազմել է 39723.4 հազ. դրամ: Դրամարկղային ծախսը ծրագրով կազմել է 116,266.0 հազ. դրամ, որից դրամաշնորհի միջոցներից 76,543.0 հազ. դրամ, համաֆինանսավորման միջոցներից՝ 39,723.0 հազ. դրամ: Փաստացի ծախսը ծրագրով կազմել է 101,760.6 հազ. դրամ, որը կազմում է նախատեսված բյուջեի 52%:

Թերակատարումը պայմանավորված է այն հանգամանքով, որ մի շարք պայմանագրեր, որոնք նախատեսված էին իրականացնել ճապոնական դրամաշնորհի ծրագրի շրջանակներում, ֆինանսավորվեցին Հոլանդական դրամաշնորհի միջոցներից: Այդպիսով, տնտեսվեցին ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորման միջոցները, քանի որ Հոլանդական դրամաշնորհը ՀՀ կառավարության համաֆինանսավորում չի նախատեսում: Վերոնշյալով էլ պայմանավորվում է Հոլանդական դրամաշնորհային միջոցներից կատարված ծախսերի գերակատարումը:

2010 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում հիմնականում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- 2010թ. ընթացքում իրականացվել է հանրապետության դատարանների բոլոր նստավայրերում տեղադրված և շահագործվող վարչարարության և դատական գործերի կառավարման “CAST” տեղեկատվական համակարգի երկրորդ սերնդի ներդրման աշխատանքներ, ինչպես նաև բոլոր դատական ծառայողների ուսուցման դասընթացների կազմակերպում,
- Ծրագրի շրջանակներում իրականացվել են մի շարք տեղական և միջազգային մրցույթներ, որոնց արդյուքնում կնքված պայմանագրերով իրականացվել են կառուցման և վերակառուցման ենթական շենքերի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները, այդ թվում՝ Սևան, Կապան և Իջևան քաղաքներում տեղակայված դատարանների շենքերի համար;
- Իրականացվել են հեղինակային և տեխնիկական հսկողության աշխատանքներ Մեղրի, Գորիս, Ապարան, Եղեգնաձոր քաղաքների դատարանների, ինչպես նաև ՀՀ արդարադատության Ակադեմիայի շենքերի շինարարության համար:

«ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով «Համաշխարհային Բանկի աջակցությամբ իրականացվող Դատաիրավական բարեփոխումների երկրորդ վարկային ծրագրում ճապոնական դրամաշնորհային ծրագրի» իրականացման համար նախատեսվել է ընդհանուր 284,891.7 հազ. դրամ, որից 222,938.9 հազ. դրամը դրամաշնորհի միջոցներից և 61,952.8 հազ. դրամը՝ համաֆինանսավորման միջոցներից: Դրամարկղային ծախսը ծրագրով կազմել է 242,187.1 հազ. դրամ, որից դրամաշնորհի միջոցներից 180,234.3 հազ. դրամ, համաֆինանսավորման միջոցներից՝ 61,952.8 հազ. դրամ: Փաստացի ծախսը ծրագրով կազմել է 254,271.9 հազ. դրամ:

Համաշխարհային Բանկի աջակցությամբ իրականացվող Դատաիրավական բարեփոխումների երկրորդ ծրագրում հոլանդական դրամաշնորհային ծրագիր

«ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով «Համաշխարհային Բանկի աջակցությամբ իրականացվող Դատաիրավական բարեփոխումների երկրորդ վարկային ծրագրում հոլանդական դրամաշնորհային ծրագրի երկրորդ փուլի իրականացման համար նախատեսվել է ընդհանուր 435,484.1 հազ. դրամ: Դրամարկղային ծախսը ծրագրով կազմել է 663,107.3 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 662,968.7 հազ. դրամ, որը կազմում է նախատեսված բյուջեի 152%:

2010 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում հիմնականում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- ՀՀ արդարադատության խորհրդի աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու և ՀՀ դատական դեպարտամենտի ֆունկցիոնալ խնդիրների իրականացման նպատակով տեխնիկական օժանդակության համալիր խորհրդատվության իրականացում,
- Ծրագրի շրջանակներում 2010թ. հոկտեմբեր ամսից պիլոտային եղանակով շահագործվում է նաև «Դատալեքս» տեղեկատվական համակարգի ինտերնետային կայքը՝ [www.datalex.am](http://www.datalex.am),
- Շարունակվում է Ծրագրի օժանդակությունը «Արլիս» տեղեկատվական համակարգին:
- 2009թ. սկսած ՀՀ հանրային հեռուստատեսության Առաջին ալիքի եթերում հեռահարձակվում է Ծրագրի շրջանակներում ստեղծված «Դատաժամե հաղորդաշարը, որի նպատակն է հանրությանը ծանոթացնել դատական համակարգի հետ, ինչպես նաև իրազեկել հանրությանը դատական կարգով իրավունքները պաշտպանելու եղանակների մասին:
- Միջազգային և տեղական խորհրդատուների թիմը իրականացրել է առևտրային արբիտրաժի գործառույթների ներդրման համապարփակ ուսումնասիրություն և ՀՀ արդարադատության նախարարությանը ներկայացրել է առաջարկների փաթեթ, ինչի հիման վրա հետագայում պետք է շարունակվի տվյալ տեսակի այլընտրանքային վեճերի լուծման մեխանիզմների կիրառման քաղաքականության և ռազմավարության մշակումը: Ծրագրի իրականացման շրջանակներում տարվա ընթացքում կազմակերպվել են գիտաժողովներ, մասնագիտական քննարկումներ և

դասախոսական կազմերի ուսուցման ծրագրեր: Խորհրդատուների կողմից մշակվել և հրատարակվել է նաև արբիտրաժի ծառայությունների վերաբերյալ ուսումնական ձեռնարկ:

«ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով «Համաշխարհային Բանկի աջակցությամբ իրականացվող Դատաիրավական բարեփոխումների երկրորդ վարկային ծրագրում հոլանդական դրամաշնորհային ծրագրի» իրականացման համար նախատեսվել է 273,321.0 հազ. դրամ: Ծրագիրը ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորում չի նախատեսում: Դրամարկղային ծախսը ծրագրով կազմել է 462,554.9 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 475,962.1 դրամ:

#### Թարգմանչական ծառայություններ

2010 թվականին «Թարգմանչական ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվել է 102000.0 հազ. դրամ, ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 102000.0 հազ. դրամ: Թարգմանվել է 8516 էջ:

2009 թվականին «Թարգմանչական ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվել է 102000.0 հազ. դրամ, ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 102000.0 հազ. դրամ:

#### ՀՀ արդարադատության նախարարության հատուկ ծառայողների վերապատրաստում և հատուկ ուսուցում

«ՀՀ արդարադատության նախարարության հատուկ ծառայողների վերապատրաստում և հատուկ ուսուցում» ծրագրի գծով 2010 թվականին

նախատեսվել է 154906.00 հազ. դրամ, ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 154848.18 հազ. դրամ: 2009 թվականին այս ծրագրով նախատեսվել է 154506.0 հազ. դրամ, ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 154506.0 հազ. դրամ:

Գումարի ավելացումը 2009 թվականի նկատմամբ պայմանավորված է գազի սակագնի ավելացմամբ::

2010 թվականին «Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ» ծրագրի գծով ֆինանսավորումը կազմել է 7967.37 հազ. դրամ, իսկ դրամարկղային և փաստացի ծախսը՝ 7966.43 հազ. դրամ, իսկ 2009 թվականին ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսը՝ 6272.1 հազ. դրամ:

2010 թվականին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից նախարարությանը նախատեսվել է 307313.61 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 286541.52 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 286541.48: Իսկ 2009 թվականին ՀՀ կառավարության ֆոնդից նախարարությանը հատկացվել է 41222.89 հազ. դրամ: Ստորև ներկայացվում է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից 2010 թվականի հատկացումների մասին տեղեկանքը.

Որոշման համարը,	Նպատակը	Նախատեսված	Ֆինանսավորում	Դրամարկղային ծախս
229-Ա 11.03.2010թ.	Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացված պահանջները կատարելու նպատակով	1155,660	1155,660	1155,653
232-Ա 11.03.2010թ.	Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացված պահանջները կատարելու նպատակով	916,649	916,649	916,626



233-Ա 11.03.2010թ.	Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացված վճռի պահանջները կատարելու նպատակով	3939,75	3939,75	3939,75
769-Ա 24.06.2010թ.	Ռեզիստրի գործակալության Նոյեմբերյանի տարածքային բաժնի պետին 2009 թվականի չստացված եկամուտները վճարելու նպատակով	1978,70	1978,70	1978,68
960-Ա 05.08.2010թ.	Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացված վճռի պահանջները կատարելու նպատակով	1218,75	1218,75	1218,75
1040-Ն 19.08.2010թ.	Երևան քաղաքում իրավաբանական անձանց գրանցման ծառայությունների մատուցումը «Մեկ պատուհանի կանգառ» սկզբունքով իրականացնելու համար համապատասխան տարածքի վերանորոգման և կահավորման համար	113262,40	100752,86	100752,86
1207-Ն 16.09.2010թ.	«Հրատարակչական, տեղեկատվական և տպագրական ծառայություններ» իրականացնելու համար	100712,10	92642,16	92642,16
1363-Ն 21.10.2010թ.	«Հայաստանի Հանրապետության	23168,70	22976,10	22976,10

	փորձագիտական կենտրոն » ՊՈԱԿ-ին անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացված շենքի վերանորոգման համար			
1568-Ա 02.12.2010թ.	Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացված վճռի պահանջները կատարելու նպատակով	7680,00	7680,00	7680,00
1604-Ա 02.12.2010թ.	Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացված վճռի պահանջները կատարելու նպատակով	480,90	480,90	480,90
111-Ա 11.02.2010թ.	ԴԱՀԿ ծառայության 2007-2009թթ. ընթացքում փոստային ծառայությունների գծով առաջացած պարտքերի մարման նպատակով	26500,0	26500,0	26500,0
768-Ն 24.06.2010թ.	ԴԱՀԿ ծառայության փոստային ծառայությունների գծով առաջացած պարտքերի մարման նպատակով	26300.0	26300.0	26300.0
	Ընդամենը	307313.61	286541.52	286541.48

ՀՀ արդարադատության նախարարությունը ունի մեկ արտաբյուջետային հաշիվ, որը բացվել է ՀՀ կառավարության 29.05.2002 թ. թիվ 632 որոշման համաձայն, այն նախատեսվել է Եվրախորհրդի կողմից տրամադրված միջոցներով սեմինարների կազմակերպման համար: 2010 թվականին նշված հաշվին մուտքեր և հաշվից ելքեր չեն եղել: 01.01.2011թ. դրությամբ մնացորդը կազմել է 1.5 հազ. դրամ: ԴԱՀԿ ծառայության արտաբյուջետային հաշիվը տնօրինվում է առանց նախահաշվի:

Կից ներկայացվում է նաև 2010 թվականի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության կողմից եկամուտների հավաքման մասին հաշվետվությունը: Ներկայացված հաշվետվության մեջ ստացված եկամուտների տարբերությունը ծրագրային ցուցանիշներից կայանում է նրանում, որ հաշվետվության մեջ արտացոլվել են 2010 թվականին ՀՀ արդարադատության նախարարության համապատասխան ստորաբաժանումների կողմից փաստացի կատարված գործողությունների դիմաց գանձված տուրքերի և եկամուտների գումարները: 2009 թվականի համեմատությամբ հավաքված եկամուտների տարբերությունը պայմանավորված է կատարված գործարքների քանակով:

ՀՀ արդարադատության նախարարության  
աշխատակազմի ղեկավար՝

Ն. ԽԱԶԱՏՐՅԱՆ

Գլխավոր հաշվապահ՝

Զ. ՄԱՐԳԱՐՅԱՆ